ԹԻՈՒԼԻ ՀԱՐՑԻ ԱՌԹԻՎ

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Արևելյան Հայաստանում ֆեոդալական ռենտատիրության ձևերից մեկը թիուլդարությունն էր։ Ժամանակակից հայագիտության մեջ XIX դ. սկզբի վերաբերմամբ, այդ ինստիտուտի էությունը ներկայացված է այսպես. «Թիուլները շնորհվում էին առանձին անհատների՝ նրանց պետությանը մատուցած ծառայությունների դիմաց, հարկ-ռենտայից ժամանակավորապես կամ ցմահ օգտվելու իրավունքով։ Թիուլը չէր թույլատրվում ո՛չ գրավ դնել և ո՛չ էլ վաճառել, մինչդեռ մուլքի վաճառքը ազատ կերպով թույլատրվում էր։ Թիուլային գյուղերը հազվադեպ էին ժառանգական ավատներ դառնում, այն էլ ավելի հաճախ այն դեպքերում, երբ գտնվում էին տեղաբնակ հայ ազնվականության ձեռքում»[1]։

Այս ընդհանուր բնորոշումը հիմնականում համընկնում է սովետական մի շարք հետազոտողների ընդունելի եզրակացություններին, որոնք արդյունք են նաև նախորդ դարերին վերաբերող փաստական նյութի քննության։

Մասնագիտական գրականության մեջ նույն այդ եզրակացություններն ուղեկցվել են հաճախ ամփոփիչ ձևակերպումների արտաքին նմանությամբ սքողված տարաձայնություններով, ինքնահակասող դրույթներով։ Դրանց բանավիճային սրությունն ընդգծել է հատկապես Ս. Մարկոսյանը՝ սեփական տեսակետի հիմնավորմանը զուգընթաց[2]։ Կարծում ենք, որ նա ըստ էության ճիշտ է վերագնահատել թիուլի հարցի ուսումնասիրության վիճակը՝ Վ. Ռշտունու պատմագրական ամփոփման[3] առաջին փորձից հետո։ Ուստի, անհրաժեշտություն չենք տեսնում այդ բոլորը վերապատմելու։

Այսուհանդերձ, տակավին առկա են առանձին հեղինակների եզրակացությունների մակերեսային կամ միակողմանի գնահատման փաստեր։ Դրանք առնչվում են հատկապես Երևանի խանությունում թիուլի էվոլյուցիայի և նրա «տեղական այլատեսակության» հարցի կարևոր մանրամասներին։

Բ. Հարությունյանը գրել է. «Թիուլությունն իր ծագմամբ նույնասեռ է մուլքին և հանդիսանում է մուլքի մի տեսակը՝ սրա, այսպես ասած, լայն

---

1 «Հայ ժողովրդի պատմություն», հ. V, Երևան, 1974, էջ 20։

2 Ս. Մարկոսյան, Ռուսաստանին միանալու նախօրյակին Արևելյան Հայաստանի հողատիրության և ճորտատիրության հարցի շուրջը (ՀՍՍՀ ԳԱ «Պատմա-բանասիրական հանդես») (այսուհետև՝ ՊԲՀ), 1961, № 3—4, էջ 255—262։

3 Վ. Ռշտունի. Ուրվագծեր Հայաստանի գյուղացիության պատմության, մաս Ա, Երևան, 1960, էջ 9—46։ Աշխատության այս բաժինը, գրեթե նույնությամբ, հրատարակվել է ՊԲՀ-ի 1958 թ. № 2-ում, առանձին հոդվածով՝ «Ֆեոդալական հարաբերությունները Արևելյան Հայաստանում Ռուսաստանին միանալու նախօրյակին», որը և նկատի է ունեցել Ս. Մարկոսյանը։

առումով»[4]։ Սկզբունքային բանավեճ հարուցած այս տողերը մասամբ հասկանալի են մուլքի հետևյալ բնորոշման կողքին. «...ռենտա հարկի մուլքադարական մասն այլ բան չէր, քան ընդհանուր ռենտայի որոշակի բաժինը, որը գանձարանը զիջում էր (ժամանակավորապես կամ ժառանգաբար) տարբեր մարդկանց կամ հոգևոր հաստատությունների՝ պետական ծառայության դիմաց (ոռճիկի փոխարեն), իբրև պարգև վաստակների համար կամ իբրև վախմ կրոնական ծառայության համար»[5]։

Հեղինակի ձևակերպումներն իսկապես շեշտում են մուլքի ու թիուլի նույնասեռությունը միայն դրանց ծագման և առանձնաշնորհման առարկայի՝ ռենտայի, առումով։ Եթե դժվար է ենթադրել թիուլի, իբրև ընդլայնված մուլքի, վախմային տիրում, ապա նրա ժառանգման մասին էլ պետք էր խոսել վերապահությամբ։ Ինչևէ. հետազոտողների ուշադրությունը սևեռվել է Բ. Հարությունյանի առաջին դրույթին, որը ներառում է բավարար հստակությամբ շուրվագծված երկու հարց։ Մի բան է պարզորոշ ասել, որ մուլքի ու թիուլի համասեռ ծագումը պայմանավորված էր միևնույն պետական առանձնաշնորհմամբ՝ պաշտոնավարության և հատուկ ծառայությունների համար (ի դեպ, մուլքի վերաբերմամբ սա վիճարկված, բայց, մեր կարծիքով, ճիշտ եզրակացություն է), մեկ այլ բան՝ որ, անկախ շնորհումների դրդապատճառներից, տիրակալումների տևողությունից, թիուլը ընդհանուր հարկ-ռենտայի մուլքադարական մասի մի տեսակն էր կամ հակառակը։ Երկրորդ դեպքում, ասելիքը կարող է իմաստավորվել երկու ինստիտուտների տնտեսագիտական համադրմամբ, այսինքն, այն խնդրի արծարծմամբ, թե ի՞նչն էր պարգևաշնորհման առարկան, ռենտատիրության հիմքը։

Սակայն, հենց այս կարևոր նկատառումով, Բ. Հարությունյանի վերոհիշյալ մտքերը չեն համընկնում Ներա, Ի. Պետրոշևսկու, Վ. Ռշտունու, Մ. Ադոնցի և այլ հետազոտողների հիմնական տեսակետին, ըստ որի մուլքգյուղատիրությունը կամ մուլք-տասանորդի յուրացման հիմքը հողի անպայման մասնավոր սեփականությունն էր[6]։ Հանրահայտ է, որ թիուլն էլ, իբրև կանոն, ռենտայի փոխակերպված պետական հարկի, ավելի հաճախ՝ նրա մի բաժնի (փոքր բահրա-հնգորդի) ժամանակավոր կամ ցմահ մասնատիրումն էր։ Ի. Պետրուշևսկու և տյլոց կարծիքով, այն Սեֆևիների ժամանակ գործնականում դառնում էր նաև պայմանական հողատիրություն, XVIII դ. կեսերից վեր էր ածվում հողային սեփականության կամ մուլքին նույնանալու տենդենց էր ցուցաբերում[7]։ Ս. Մարկոսյանի վերլուծությունները համոզում

---

4 Б. Арутюнян, Крупное монастырское хозяйство в Армении в XVII—XVIII вв., Ереван, 1940, стр. 38.

5 Նույն տեղում, էջ 19։

6 Նույն տեղում, էջ 33—34, 36, И. Петрушевский, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI—начале XIX вв., Л., 1949, стр. 222—241; М. Адонц, Экономическое развитие Восточной Армении в XIX веке, Ереван, 1957, стр. 35—38, Վ. Ռշտունի, նշվ. աշխ., էջ 9—46, Հ. Թումանյան, Հայաստանի տնտեսական զարգացման պատմություն, Երևան, 1960, էջ 252—257 (անվանապես հիշատակում ենք այն հեղինակներին, որոնց եզրակացություններին անդրադառնալու ենք ստորև՝ մուլքի և թիուլի համադրման առթիվ)։

7 И. Петрушевский, նշվ. աշխ., էջ 215—221։ Հմմտ. Վ. Ռշտունի, նշվ. աշխ., էջ 27—28, М. Адонц, նշվ. աշխ., էջ 33, 37—38, Հ. Թումանյան, նշվ. աշխ., էջ 257—258, А. Новосельцев, В. Пашуто, Л. Черепнин, Пути развития фео-

են, որ թիուլի այդիմաստ էվոլյուցիան չի հաստատվում վավերագրական տվյալներով, բացառյալ նրա՝ իբրև հարկ-ռենտայի յուրացման իրավունքի, պայմանական ժառանգման ոչ համընդհանուր փաստը XVIII դ. և XIX դ. սկզբի անդրկովկասյան խանություններում[8]։

Արդ՝ եթե մուլքադարության հիմքը հողի անպայման մասնավոր սեփականությունը լիներ, ապա պետական սեփականությունից կամ նույնիսկ մասնավոր պայմանական հողատիրությունից «ծագող» թիուլը (ռենտայի փոխակերպված հարկամասը) որակապես չէր կարող նույնասեռ լինել մուլքին և հանդիսանալ նրա մի տեսակը, այն էլ՝ լայն առումով։ Ընդգծելով այս հակասությունը, Ս. Մարկոսյանը միաժամանակ վկայաբերել է թիուլա-մուլքադարական գյուղերի միանձնյա տիրման, անբաժան հողատարածքով ու հարկատուներով միևնույն գյուղի համատիրակալման և առանձին մուլքաբաժինների օտարման հայտնի փաստերը։ Իսկապես, հնարավոր չէ ակնկալել դրանց տրամաբանված մեկնաբանություն՝ ելակետ ընդունելով ինչպես մուլքի նույնացումը հողի մասնավոր սեփականության հետ, այնպես էլ նրա այդիմաստ համասեռությունը թիուլին կամ վերջինիս վերափոխման (հողատիրություն դառնալու) տենդենցը։ Մինչդեռ նման փաստերը հաստատում են Ս. Մարկոսյանի այն պնդումը, որ մուլքն ու թիուլը որակապես նույնասեռ էին իբրև հողի պետական ֆեոդալական սեփականության տնտեսական իրացման ձևի՝ հարկ-ռենտայի մասնատիրական բաժիններ[9]։ Այլ կերպ ասած, Բ. Հարությունյանի վերոհիշյալ դրույթն ինքնին ճիշտ է, իսկ նրա ինքնահակասման հիմնական պատճառն ու անընդունելին մուլքադարության նույնացումն է հողի մասնավոր սեփականատիրման հետ։ Ըստ ամենայնի, ճիշտ դրույթը

дализма, М., 1972, стр. 110. Հ. Փափազյանի համոզմամբ արդեն իսկ XVII դ. թիուլդարները գործնականում «իրենց գյուղացիների հանդեպ ելնում էին, ըստ էության, որպես ֆեոդալական սեփականատերեր՝ իրացնելով իրենց սեփականությունը նրանցից գանձվող ռենտայով» (А. Папазян, Аграрные отношения в Восточной Армении в XVI—XVII веках, Ереван, 1972, стр. 101—102).

8 Ս. Մարկոսյան, նշվ. աշխ. (ՊԲՀ, 1961, № 3—4, էջ 246, 255—260), նույնի՝ իմունիտետի իրավունքը Արարատյան երկրում XVII—XVIII դարերում, Երևան, 1975, էջ 109—175։ Թիուլի ժառանգման պայմանականությունը հեղինակը բացատրել է այսպես. «Թիուլի իրավունքը անձնական (պերսոնալ) էր, այսինքն՝ թիուլդարությունը ժառանգական բնույթ չուներ և եթե թիուլն անցնում էր ժառանգին, ապա այդ կարող էր լինել միայն իշխանության կողմից տրվող նոր հրովարտակի հիման վրա։ Այս կողմից թիուլը հիշեցնում էր մեջնադարյան Եվրոպայի բենեֆիցիան» էջ 157)։

9 Ս. Մարկոսյան, Իմունիտետի իրավունքը Արարատյան երկրում, էջ 160—163 և ՊԲՀ, 1961, № 3—4, էջ 260—261։ Ուշադրավ է մասնավորապես հեղինակի հետևյալ դիտողությունը Մելիք Աղամալյանի թիուլա-մուլքադարական իրավունքի մեկնաբանության առթիվ. «Եթե տվյալ գյուղի, օրինակ՝ Արղականի, մուլքը մասնավոր սեփականության իրավունքով պատկանում էր ֆեոդալին, ապա նույն գյուղում թիուլային իրավունք ստանալը հողային սեփականության բնույթ կրել չէր կարող այն պարզ պատճառով, որ մեր հետազոտողների (Ի. Պետրուշևսկու, Վ. Ռշտունու, Մ. Ադոնցի և այլոց—Ս. Ա.) պատկերացմամբ հողային ֆոնդը մինչև թիուլի շնորհելն արդեն ֆեոդալի սեփականությունն էր հանդիսանում... Մելիք-Սահակի ժառանգները (նրա մահից հետո—Ս. Ա.) զրկվելով թիուլից, շարունակում են մնալ ոչ թե գյուղի մի մասի, այլ ամբողջ գյուղի մուլքադարը։ Հետևաբար հողային ֆոնդը բաժանված չէր ֆեոդալի ու պետության միջև։ Թե՛ մուլքադարությունը, թե՛ թիուլդարությունը վերաբերում էին ամբողջ գյուղի հողային ֆոնդին։ Իսկ եթե այդպես է, ապա միևնույն հողային տարածությունը չէր կարող լինել և՛ անպայման սեփականություն, և՛ պայմանական, և՛ ժառանգական սեփականություն, և՛ շատ-շատ ցմահ» (էջ 260)։

կանխավ ղրկվել է վերլուծական խորքից, մնացել թերավարտ, որովհետև Բ. Հարությունյանը սկզբից ևեթ մուլքերի օտարումն ու ժառանգումը դիտել է որպես հողի սեփականատիրման հայտանիշներ[10], լռելյայն բացառելով փաստերի այլ հնարավոր, ավելի համակողմանի և ստույգ մեկնաբանություն՝ ռենտատիրության իրավունքի օտարման կամ անժամկետ ժառանգման իմաստով[11]։ Ջանդրադառնալով մուլքի բնորոշման առթիվ ծավալված բանավեճի բոլոր կողմերին՝ հիշենք, որ այդ իրավունքի էությունը ֆեոդալական էր, անկախ ֆեոդալական հողային սեփականության կոնկրետ ձևից։

Վ. Ռշտունին թիուլի ու նրա էվոլյուցիայի հարցում «ընդհանուր առմամբ» համաձայնելով Ի. Պետրուշևսկու հետ, միաժամանակ ընդունել է մուլքի ու թիուլի նույնասեռությունն «այն իմաստով միայն, որ երկուսն էլ ֆեոդալական հողային հարաբերություններ էին նշանակում, սակայն, ամեն մեկն իր էական առանձնահատկություններով»[12]։ Հեղինակը դրականապես համառոտագրել է այդ առանձնահատկությունները ըստ Բ. Հարությունյանի[13] և անդրադարձել Ի. Պետրուշևսկու աշխատության այն հատվածներին, ուր «հիմնական քննադատության են ենթարկված» Հայկական մարզի ցարական պաշտոնյա Ի. Շոպենի հաղորդումները մուլքի ու թիուլի, մասնավորապես Երևանի խանությունում վերջինիս մի «տարատեսակի» վերաբերյալ[14]։ Նա նշել է նաև, որ Բ. Հարությունյանը հակված է թիուլային համարելու էջմիածնի վանքի կալվածատիրական իրավունքները Վաղարշապատ գյուղի նկատմամբ, իսկ «Ի. Պետրուշևսկին այդ նկատում է իբրև Շոպենի սխալ տեսակետի մասնակի ընդունում»[15]։

Մուլքի և թիուլի՝ կասկած չհարուցող ֆեոդալական նշանակության ընդգծումն այստեղ ստվերել է Բ. Հարությունյանի ինքնահակասումը, նրա և Ի. Պետրուշևսկու սկզբունքային տարաձայնությունները։ Եղել են նաև հողային հարաբերությունների ուրիշ ձևեր ու հարկատեսակներ, արտադրողներից գանձվող հասույթների այլևայլ առանձնաշնորհումներ՝ ընդհանուր ֆեոդալական նշանակությամբ։ Մինչդեռ, մասնատիրման առանձնահատկությունների արձանագրումը պիտի սրեր այն հարցը, թե կոնկրետ ի՞նչ իմաստով կարելի էր ընդունել հատկապես մուլքի ու թիուլի համասեռ ծագումն ու միատեսակությունը և Բ. Հարությունյանի դրույթը հաշտեցնել Ի. Պետրուշևսկու տեսակետին։ Հենց միայն Ի. Շոպենի «սխալ տեսակետի» արծարծումը հուշում է, որ Վաղարշապատի պատկանելության խնդրով հարուցված վեճը սկզբունքորեն մասնակի բնույթ չունի[16], այլ վերաբերում է թիուլին ու նրա զուգադրմանը մուլքին՝ առհասարակ։

---

10 Б. Арутюнян, նշվ. աշխ., էջ 29—37։

11 Ս. Մարկոսյան, Ագրարային հարաբերությունները Արարատյան երկրում XVII—XVIII դդ. և XIX դարի առաջին քառորդում, Երևան, 1959, էջ 8—70, Մ. Եղանյան, Հայաստանի հետեֆորմյան ագրարային հարաբերությունները, Երևան, 1964, էջ 10—11, В. Дилоян, Восточная Армения в первой трети XIX столетия и армяно-русские отношения (автореферат докторской диссертации), Ереван, 1974, стр. 21—22.

12 Վ. Ռշտունի, նշվ. աշխ., էջ 23։

13 Նույն տեղում. հմմտ. Б. Арутюнян, նշվ. աշխ., էջ 26, 29—30, 33—34, 38։

14 Վ. Ռշտունի, նշվ. աշխ., էջ 25—28։

15 Նույն տեղում, էջ 26, 56։

16 Վիճելի հարցն ունի նաև մեկ այլ կողմ՝ կապված «մաղաֆության» խնդրի հետ, որն այստեղ չենք քննում։

Ի. Պետրուշևսկին անհիմն է համարել նախահեղափոխական կովկասագետների (ավելացնենք՝ նաև Բ. Հարությունյանի վերը մեջբերված) այն պընդումը, ըստ որի մուլքը, որպես հարկ-ռենտայի մի մաս, ռոճիկ էր պետությանը ծառայելու դիմաց։ Նա նշել է մուլքային կալվածքների առաջացման «լեգալ» ուղիներ՝ ժառանգում, գնում, շահական և խանական առանձնաշնորհում (որը պայմանավորված չէր պետությանը ծառայելով և, չնայած որ կարող էր տրվել ծառայող մարդու կամ վաստակների համար, շնորհյալը դրանից հետո պարտավոր չէր ծառայել) և «անլեգալ» ուղի՝ զավթումներ[17]։

Պաշտոնավարության հետ մուլքատիրման կապի ժխտումն իսկ մուլքի՝ իբրև մեկընդմիշտ հողի մասնավոր սեփականության, վերաբերյալ Ի. Պետրուշևսկու տեսակետի հենասյուներից մեկն է։ Երևութապես այն առնչվում է մեզ հետաքրքրող հարցի մի կողմին՝ առայդմ ընդգծելով մուլքի ու թիուլի տարասեռ ծագումը։ Սակայն Ի. Պետրուշևսկին ափսոսանքով մատնանշել է Բ. Հարությունյանի նահանջը հիմնական տեսակետից հարցի մյուս կողմում՝ արդեն մուլքի ու թիուլի միատեսակության վերաբերյալ նրա ինքնահակասող գրությը կապելով բացառապես Ի. Շոպենի «սխալի» դյուրահավատ կրկնման կամ թիուլի ինստիտուտի սահմանափակ ըմբռնման հետ[18]։

Անկասկած, թիուլին վերաբերող Ի. Շոպենի դրույթներն առավելապես տեղեկատու-նկարագրական, քան գիտական վերլուծական բնույթի են։ Գուցե դա էլ նպաստել է այն շտապ եզրակացությանը, թե նա բավականաչափ տեղյակ չէր թիուլին՝ նույնիսկ որպես փաստագրող։ Ի. Պետրուշևսկու կարծիքով, Շոպենը հայտնի էր միայն XVIII դ. և XIX դ. սկզբին Նախիջևանի ու հատկապես Երևանի խանություններում շատ տարածված թիուլի մի տեսակը՝ համատեղումը մուլքին, այն էլ Երևանի խանությանը վերաբերող ցարական պաշտոնական ու թարգմանված պարսկական փոքրաթիվ փաստաթղթերից, ուստի նա չգիտեր, թե ի՞նչ է թիուլի ինստիտուտն առհասարակ և անդրկովկասյան մյուս խանություններում[19]։ Ի. Պետրուշևսկին իրավացիորեն նկատել է, որ թիուլի այդ «տեղական հատուկ տարատեսակը» որևէ էվոլյուցիա չապրեց հողային սեփականություն դառնալու իմաստով, այլ մնաց մուլքադարներին շնորհվող սկզբունքորեն ժամանակավոր կամ ցմահ իրավունք՝ նրանց մուլքատու գյուղերի արքունի հարկաբաժնի նկատմամբ[20]։

Հարց է ծագում. Երևանի խանությունում չկա՞ր արդյոք մուլքին չհամատեղվող, առանձին կամ ամբողջական թիուլ, թե կար, բայց Ի. Շոպենը չէր նկատել։

---

17 И. Петрушевский, նշվ. աշխ., էջ 241—243. հմմտ. П. Арутюнян, Освободительное движение армянского народа в первой четверти XVIII века, М., 1954, стр. 22—34. Ս. Մարկոսյանը փաստորեն ապացուցել է, որ մուլքերի առաջացման միակ աղբյուրը հողի պետական սեփականության սկզբունքից բխող շահական առանձնաշնորհումն էր՝ պայմանավորված և՛ շնորհյալի պաշտոնավարությամբ ու վաստակներով, և՛ ոռոգում կազմակերպելու մասնավոր նախաձեռնությամբ ու շրատիրությամբ։ Իսկ ժառանգումը, գնումը, նվիրաբերումը և զավթումները մուլքերի առաջացման կամ քանակական աճի աղբյուր չէին, այլ հատկանշում էին դրանց շարժը։ Նման գործարքները (վերադասի հաստատումներով ու դատական վճիռներով) հիշեցնում են, որ մուլքերն արդեն գոյություն ունեին (Ս. Մարկոսյան, Ագրարային հարաբերությունները Արարատյան երկրում, էջ 308—330)։

18 И. Петрушевский, նշվ. աշխ., էջ 207—208, 238։

19 Նույն տեղում։

20 Նույն տեղում, էջ 207—208։

Այս հարցի պատասխանը կարևոր է, նախ, Ի. Պետրուշևսկու եզրակացություններն առավել հստակությամբ ներկայացնելու համար։ Ս. Մարկոսյանը, օրինակ, դրել է, որ Վ. Ռշտունին և Ի. Պետրուշևսկին «տրամագծորեն հակառակ կարծիք ունեն» Երևանի խանության թիուլի վերաբերյալ, քանի որ Վ. Ռշտունին, վկայաբերելով Ի. Պետրուշևսկու ուսումնասիրությունը, պնդել է, թե Արևելյան Հայաստանում նույնպես թիուլը ժառանգական հողային սեփականություն դառնալու տենդենց ուներ (ո՞ր թիուլը—Ս. Ա.), մինչդեռ «Պետրուշևսկու կարծիքով, ի տարբերություն Անդրկովկասի մյուս խանություններ, որտեղ թիուլի շնորհումը դարձել էր հողի շնորհում, Երևանի մարզում իբրև թիուլ հատկացվում էր հարկ-ռենտայի պետությանը պատկանող մասը»[21]։ Ընթերցողը կարող է բանն այնպես պատկերացնել, թե Ի. Պետրուշևսկին ինքն էլ չի ենթադրել ամբողջ հարկ-ռենտայի թիուլատիրման գոյություն Երևանի խանությունում, ուստի և թիուլի էվոլյուցիան բնորոշ է համարել միայն Ադրբեջանի խանություններին։ Իրողությունն այդ չէ։ Պարզապես Վ. Ռշտունին անվերապահորեն առաջ է բերել Ի. Պետրուշևսկու ընդհանուր եզրակացությունը թիուլի էվոլյուցիայի մասին, իսկ Ս. Մարկոսյանն, այս դեպքում՝ Ի. Շոպենին և Բ. Հարությունյանին հասցեագրած Ի. Պետրուշևսկու քննադատությունը թիուլի «տեղական այլատեսակի» մեկնաբանման առթիվ։ Մինչդեռ, դրանց կողքին մի ծանրակշիռ փաստ կա, որը վրիպել է Ս. Մարկոսյանի ուշադրությունից։ Բանն այն է, որ Ի. Պետրուշևսկին Ի. Շոպենին և Բ. Հարությունյանին քննադատելիս, իրոք, որոշակիորեն չի ասել, որ Երևանի խանությունում դյուզի լրիվ թիուլատիրում էլ կար։ Բայց որ նա չի անտեսել վերջինիս գոյությունն այնտեղ, պարզ երևում է Արևելյան Անդրկովկասում թիուլի էվոլյուցիան արծարծող նրա ընդհանուր հարցադրումից և այդ առիթով կոնկրետ Երևանի խանությանը վերաբերող մի հպանցիկ փաստարկումից[22]։ Ըստ Ի. Պետրուշևսկու, այդ թիուլի, արդեն իբրև գյուղի ամբողջ «հարկ-ռենտայի և հողի» ժառանգումը, եթե ոչ օրենքով, ապա գործնականում խանական շնորհագրերով «ընդհանուր կանոն» էր դարձել, իսկ Վ. Ռշտունու ձևակերպմամբ Երևանի խանությունում, ընդհակառակն, ընդհանուր կանոնը թիուլի ժամանակավոր կամ ցմահ տիրումն էր, և այն ժառանգական սեփականություն դարձնելու «նկրտումների արդյունքները մեծ չէին վերջին սարդարի օրոք»[23]։ Սա է նրանց եզրակացությունների, ակնհայտորեն ոչ էական, տարբերությունը տվյալ խնդրում։

Այժմ դառնանք Ի. Շոպենին հասցեագրված քննադատությանը։ Մեր կարծիքով, նրա սակավ իրազեկության մասին Ի. Պետրուշևսկու պնդումը ճիշտ չէ։ Ի. Շոպենը գրել է «ֆեոդալական ընդհանուր սիստեմին հիմնված... և հավանաբար լեների հետ միևնույն ծագումն ունեցող» թիուլների մասին[24]։ Այս բնորոշումից հետո նա տեղեկացնում է, որ երբեմն գյուղի մուլքադարը պարգևատրվում էր նույն գյուղի թիուլով (արքունի հարկաբաժնով)՝ հատուկ ծառայության կամ խիզախության համար[25]։ Սա մուլքին համատեղվող թի-

---

21 Ս. Մարկոսյան, նշվ. աշխ. (ՊԲՀ, 1961, № 3—4, էջ 259—260)։

22 И. Петрушевский, նշվ. աշխ., էջ 220։

23 Նույն տեղում, էջ 220—221, Վ. Ռշտունի, նշվ. աշխ. էջ 23, 27—28, 43։

24 И. Шопен, Исторический памятник состояния Армянской области в эпоху присоединения ее к Российской империи, СПб, 1852, стр. 928.

25 Նույն տեղում, էջ 929։

ուլն էր, լինում էր և այնպես, որ «սարդարը որևէ աստիճանավորի տալիս էր գյուղի պետական եկամուտների մի մասը, որպես թիուլ, մինչդեռ գյուղի մուլքից օգտվում էր ուրիշը»[26]։ Սա առանձին շնորհվող թիուլն էր[27]։ Կային նաև մուլքերին փոխարինող թիուլներ, որոնց դադարեցման դեպքում առաջինները պետք է վերականգնվեին[28]։ Վերջապես բերենք Ի. Շոպենի տողերը գյուղի ամբողջ հարկ-ռենտայի թիուլային շնորհման մասին և բավականաչափ պարզ կդառնա, որ նրա տեսածն ու իմացածը միայն մուլքին համատեղվող թիուլը չէր. «Թիուլությունն ընդհանրապես տիրոջը տալիս էր անմիջական տնօրինման իրավունք առանձնաշնորհված գյուղում, որը միաժամանակ հանվում էր հարկացուցակներից. այնուհետև բոլոր տուրքերն ու պարտավորությունները գնում էին տիրոջ օգտին»[29]։

Բ. Հարությունյանը, վկայակոչելով Ի. Շոպենի այս տողերը թիուլի, իբրև ընդլայնված մուլքի, վերաբերյալ իր դրույթն ապացուցելու համար, այնուհետև գրել է. «Չնայած և թիուլդարին, այսինքն՝ թիուլի տիրոջը, տրվում էր «անմիջական տնօրինման իրավունք», սակայն, նա, ինչպես և մուլքադարը, իրավունք չուներ խախտելու հողի համայնական տիրման (մեկ այլ, ավելի հստակ ձևակերպմամբ՝ «համայնքին պատկանող հողային տարածության»—Ս. Ա.) ամբողջականությունը, իրավունք չուներ գյուղացիներից հող վերցնելու, այն վաճառելու կամ օտարելու»[30]։ Անշուշտ, մինչև Ի. Շոպենին վկայակոչելը, հեղինակը պետք է աներկմտորեն համաձայնած լիներ նրա հետ, որ ինչպես թիուլդարները, այնպես էլ մուլքադարները «եկամուտների հասարակ մասնակիցներ» էին և ոչ թե հողի սեփականատերեր։ Այլապես առկա է ինքնահակասումը։

Ի. Պետրուշևսկին, ելակետ ընդունելով այն չապացուցված կանխադրույթը, թե Ի. Շոպենին հայտնի էր միայն մուլքի ու թիուլի հանդիպակայումը և «թիուլությունն ընդհանրապես» արտահայտությունը լոկ այդ էր նշանակելու, նկատել է, որ գյուղի անմիջական տնօրինումը չէր բխում «թիուլի իրավաբանական իրավունքից, այլ կարող էր յուրացվել տիրոջ կողմից, այսպես ասած, հայտային կարգով»[31]։ Այստեղ ու այսքանով էլ նա փորձել է հայտնաբերել Ի. Շոպենին «դյուրահավատորեն» վստահող Բ. Հարությունյանի «սխալը»։

Տվյալ դեպքում, երբ մուլքի ու թիուլի համատեղման առթիվ չի մատնանշվում թիուլի վավերագրված որևէ շնորհում, դժվար է ասել, թե հեղինակ-

---

26 Նույն տեղում։

27 Ի դեպ, թիուլ կարող էր մասնահանվել նաև ոչ հողագործական, օրինակ՝ արհեստագործական, հարկային եկամուտներից։ И. Петрушевский, նշվ. աշխ., էջ 188, А. Папазян, նշվ. աշխ., էջ 101։

28 И. Шопен, նշվ. աշխ., էջ 929—930։

29 Նույն տեղում, էջ 928—929։ Այս բոլորից հետո, Ի. Շոպենը հիշատակել է պաշտոնների ժառանգման հետ կապված թիուլների (եկամուտներից օգտվելու իրավունքի) գործնական ժառանգում, օտարման ու դրավդրման դեպքեր՝ ի խախտումն սահմանված կարգի (И. Шопен, նշվ. աշխ., էջ 930)։

30 Б. Арутюнян, նշվ. աշխ., էջ 34, 37—38։ Այսուհանդերձ հեղինակը փորձել է պնդել, որ նույնիսկ գյուղացիական «չինությունների տակի հողը պատկանում էր կալվածատեր-մուլքադարին» (էջ 36), և նա կարող էր օտարել «մուլքային կալվածքն ամբողջությամբ կամ մաս-մաս» (էջ 34)։

31 И. Петрушевский, նշվ. աշխ., էջ 207—208։

ներից ով ի՞նչ բովանդակությամբ է ըմբռնել (կամ պետք է ըմբռներ) «գյուղի անմիջական տնօրինումը»։ Դա որչափ հավաքական, նույնչափ էլ հստակ տարբերանշումներ պահանջող արտահայտություն է։ Իսկ ընդհանրապես կարելի է մտորել և՛ բնավճար-բահրան, և՛ դրամատուրքը անձամբ դանձելու, և՛ գյուղացիների որոշակի աշխատանքային պարտավորություններից օգտվելու մասնատիրոջ իրավունքի առկայությամբ կամ բացակայության, և՛ նրա վարչական իշխանության, գուցե և՝ ուրիշ բաների մասին։ Թերևս Ի. Պետրուշևսկու դիտողությունից նույնպես մակաբերենք հարկագանձման իրավաբանական կարգավորման խնդիրը (նկատի ունենալով սուվերենի և կոնկրետ շնորհյալի փոխհարաբերության շրջանակը), առանձնաշնորհված գյուղում միանձնյա տիրոջ կառավարչական իրավասության խնդիրը և այլն։ Ընդ որում, եթե, օրինակ, աշխատավճարումներից օգտվելը պարտադրորեն չէր բխելու թիուլի իրավաբանական իրավունքից, ապա՝ առավել ևս չէր կարող պայմանավորվել մուլքի ու թիուլի հանդիպակայումով («явочным порядком»)։ Սակայն բոլոր պարագաներում կարևորն այն է, որ Ի. Պետրուշևսկու այդ դիտողությունը չի պարունակում մուլքն ու թիուլը որակապես կամ ըստ հիմքերի համադրող գործոն (որպիսին, օրինակ, առաջադրվում է Ս. Մարկոսյանի մեկնաբանությամբ)։ Մինչդեռ, Բ. Հարությունյանի դրույթն ըստ էության գնահատելու համար, առաջին հերթին, անհրաժեշտ էր ուշադրություն դարձնել նրա այն տողերին, որ «գյուղի անմիջական տնօրինումը» չէր նշանակում համայնական հողի ինքնակամ տնօրինում։ Ճիշտ է, հեղինակը կարծել է, թե էջմիածնի վանքը, որպես թիուլատեր, օգտվելով «կարգադրողի իր իրավունքից» Վաղարշապատի գյուղացիներին սահմանված աշխատավճարի չափը գերազանցող կոռի էլ էր տանում՝ «խորամանկորեն» այդ հարկադրանքը մեղմացնելով «որոշ վճարով»[32]։ Հիշենք նաև, որ այս վերջին եզրակացությունը (մասնավորապես Ի. Շոպենի հաղորդումների յուրովի մեկնաբանությամբ) առարկելի է[33]։ Բայց անկախ ռենտայի որոշակի ձևից և փաստական չափերից, անկախ «գյուղի անմիջական տնօրինման» այլևայլ հատկանիշներից և դրանց իրավաբանական ակունքներից, Բ. Հարությունյանի դրույթով համադրվում են գյուղացու վճարած հարկ-ռենտայի տարբեր բաժինները։ Իսկ դրանց անբաժան յուրացումը կարող էր տեղի ունենալ ինչպես միևնույն անձնավորության օգտին մուլքի ու թիուլի համատեղման, այնպես էլ նոր հիմունքով գյուղի ամբողջ հարկ-ռենտայի թիուլային շնորհման դեպքում. Ըստ Ի. Պետրուշևսկու, Ի. Շոպենն անծանոթ էր վերջին դեպքին և հենց այդ հանդիպակայումն էր սխալմամբ «ընդունում թիուլի ինստիտուտի էության տեղը»[34]։ Այստեղ փաստորեն միակ ընդգծելին մնում է այն հարցը, թե կարելի՞ է արդյոք մուլք-տասանորդի և բահրա-հնգորդի (գուցե նաև դրա հետ միասին՝ գյուղացիների այլ պարտավորությունների) միանձնյա տիրումը «թիուլ» անվանել։

Հենց Ի. Պետրուշևսկու նշած հարկ-ռենտայի ամբողջական թիուլային շնորհումը[35] (նոր հիմունքով) արդեն ներառում էր արքունի եկամուտների

---

32 Б. Арутюнян, նշվ. աշխ., էջ 59—60։

33 Վ. Դիլոյան, էջմիածնի վանական տնտեսությունը 19-րդ դարի սկզբին («էջեր հայ ժողովրդի պատմության և բանասիրության», Երևան, 1971, էջ 178)։

34 И. Петрушевский, նշվ. աշխ., էջ 207։

35 Նույն տեղում, էջ 218։

այն բաժինը, որն այլ պարագաներում, իբրև մուլք-տասանորդ, անցնում էր ուրիշների կամ մնում էր պետությանը։ Եթե այդ լրիվ հատկացումը պաշտոնապես կոչվում էր թիուլ, ապա, գործ ունենք տերմինի այլ՝ փոքր բահրայից քանակապես տարբեր, մի ընդլայնված բովանդակության հետ։ Ուրեմն մասնատիրոջ յուրացրած ռենտայի, առտադրոդի ամբողջական տուրքավճարի առումով, Բ. Հարությունյանի դրույթը թիուլի՝ իբրև ընդլայնված մուլքի, վերաբերյալ առարկության տեղ չի թողնում։ Այդ նույն նկատառումով քանակապես տարբեր, բայց որակապես համասեռ էին նաև մուլք-տասանորդն ու բահրահնգորդը։ Ճիշտ չէր լինի հրաժարվել այն պարզ մտքից, որ այս երկուսի համատեղմամբ մասնատիրոջ իրավունքն ընդլայնվում էր թիուլի հատկացման շնորհիվ՝ անկախ հարկագանձման գործնական եղանակից և գյուղի անմիջական տնօրինման «հայտային կարգից»։ Այդ պատճառով էլ «թիուլ» տերմինը, իր առՏրյա գործադրմամբ, Ի. Շոպենի ժամանակ կլանում կամ, Բ. Հարությունյանի խոսքերով ասած, ընդլայնում էր «մուլքի» իմաստը, երբ համատեղում էր վերջինին։ Հարկավ, այդ իմաստով պետք է ըմբռնել սովետական հետազոտողների հետևյալ ձևակերպումները (ընդգծումները մերն են—Ս. Ա.). Բ. Հարությունյան. «Վաղարշապատի գյուղացիները, որոնք էջմիածնի տիրապետության տակ էին գտնվում թիուլական իրավունքով, վճարում էին էջմիածնին բացի «մուլքից», նաև «բահրա» (ռենտայի պետական մասը), բերքի 1/5-ի չափով, ինչպես նաև դրամական տուրք»[36]։ Վ. Ռշտունի. թիուլատերերը ստանում էին ոչ միայն մուլքադարին հասնող տուրքերը, այլև պետական հարկերը[37]։ Մ. Ադոնց. «Եթե մուլքադարական և թիուլային իրավունքը ներկայանում էր մեկ անձնավորությամբ, ապա թիուլդարը միաժամանակ ստանում էր մուլքը՝ հարկ-ռենտայի պետական բաժինը»[38]։ Հ. Թումանյան. «Հենց այս (մուլքի և թիուլի համատեղման—Ս. Ա.) տեսակետից մոտենալով՝ ակնհայտ է դառնում, որ թիուլդարը ոչ միայն հանդես էր դալիս լոկ որպես հողի սեփականատեր, այլև, միաժամանակ, որպես պետության ներկայացուցիչ, որին հանձնված էր տվյալ գյուղի տնօրինումը»[39]։ Ս. Մարկոսյան. «Թիուլը կարող էր հատկացվել նույն գյուղի մուլքադարին, այս դեպքում, թիուլն իր մեջ կլանում էր ամբողջ հարկ-ռենտան, կամ ամբողջ բահրան»[40]։ Վ. Դիլոյան. «Վաղարշապատ և Օշական գյուղերը, որպես վանքապատկան տիրույթներ, ինչպես մուլքը, այնպես էլ բահրան վճարում էին էջմիածնին»[41], ապա՝ «էջմիածնի վանքին պատկանող (այդ—Ս. Ա.) գյուղերը նույնպես համարվում էին թիուլ»[42] (նկատի է ունեցել XIX դ. սկիզբը)։

Եթե Վ. Ռշտունին, Մ. Ադոնցը և Հ. Թումանյանը ընդունել են Ի. Պետրուշևսկու հիմնական տեսակետը մուլքի ու թիուլի վերաբերյալ, ապա սույն ձևակերպումները և Ի. Շոպենին դրականորեն վկայակոչելը[43] ապացուցում են նրանց անհետևողականությունը մեզ հետաքրքրող խնդրում։ Բայց՝ սա ի

---

36 Б. Арутюнян, նշվ. աշխ., էջ 79, 81, 121։
37 Վ. Ռշտունի, նշվ. աշխ., էջ 23, 54։
38 М. Адонц, նշվ. աշխ., էջ 82։
39 Հ. Թումանյան, նշվ. աշխ., էջ 257—258։
40 Ս. Մարկոսյան, Իմունիտետի իրավունքը Արարատյան երկրում, էջ 158։
41 Վ. Դիլոյան, նշվ. աշխ., էջ 160։
42 В. Дилоян, նշվ. ավտոռեֆերատը, էջ 27։
43 Վ. Ռշտունի, նշվ. աշխ., էջ 23, 26, 54, М. Адонц, նշվ. աշխ., էջ 38—39։

միջի այլոց։ Ուշագրավ է, որ այդ ձևակերպումներում թիուլ (թիուլդար) տերմինով ներկայացված է մուլքի և թիուլի համատեղումը։ Արդ՝ հետևելով Ի. Պետրուշևսկուն պիտի կարծել, որ ոչ միայն Բ. Հարությունյանը, այլև վերոհիշյալ բոլոր հեղինակները կրկնել են Ի. Շոպենի «սխալը», քանի որ վերջինս հենց այդ երևույթն է «սխալմամբ ընդունել թիուլի ինստիտուտի էության տեղը»։ Մինչդեռ, ոչ միայն Ի. Շոպենի գրքում, այլև նրան ժամանակակից 1830—1840-ական թվականների արխիվային շատ վավերագրերում նույնպես մուլքի և թիուլի համատեղումը միևնույն տիրոջ օգտին հաճախ կոչվում է թիուլ, չնայած որ գյուղն իրականում թիուլա-մուլքադարական էր[44], իսկ «մուլք» տերմինի զուգահեռ օգտագործումը գյուղի տասանորդի տիրման նշանակությամբ բնավ դուրս չէր մղվել։ Մեր կարծիքով, երբ նման դեպքերում մոռացության չի տրվում կամ ենթադրվում է իրական վիճակը, տիրակալումների իրավաբանական կազմը՝ «թիուլ» տերմինի այդիմաստ գործադրումը սխալ չպետք է համարել։

Այս բոլորով հանդերձ, համոզված ենք, որ Ի. Շոպենի արտահայտությունը՝ «թիուլությունն ընդհանրապես» վերաբերում է նաև առանձին շնորհվող այն թիուլին, որի տերը, ինչպես նկատել է Ի. Պետրուշևսկին, անձամբ ինքն էր գանձում ամբողջ հարկ-ռենտան, և խանական հարկահավաքին արգելված էր գյուղ մտնել[45]։ Սակայն, ըստ Ի. Պետրուշևսկու, XVIII դ. և XIX դ. սկզբին այդ թիուլն արդեն հիմնովին տարբերվում էր սովորական թիուլից, այսինքն՝ հատկանշում էր վերջինիս էվոլյուցիան հողի մասնավոր սեփականություն դառնալու և շնորհյալից «հարկատու ռահաթին... լիակատար անձնական կախման մեջ դնելու» իմաստով[46]։

Մեր կարծիքով Ս. Մարկոսյանն ապացուցել է, որ այս եզրակացությունը փաստապես հիմնավորված չէ կամ հետևանք է փաստերի երևութական ընկալման[47]։ Հիշենք միայն, որ խոսքը ոչ միայն Ադրբեջանի խանությունների թիուլի մասին է, այլև՝ այն թիուլի, որին իբր անտեղյակ էր Ի. Շոպենը և որը, Ի. Պետրուշևսկու հավաստմամբ, գոյություն ուներ նաև Երևանի խանությունում, ուր «ամբողջությամբ գյուղական համայնքներ էին շնորհվում սեիդներին, ախունդներին և ծառայող մարդկանց»[48]։ Իբրև ապացույց նա վկայակոչել է Հայկական մարզի վարչության 1828 թ. երեք փաստաթուղթ և Ս. Եղիազարովի աշխատությունը։

Հարց է ծագում. ի՞նչ հիմք կա ասելու, որ թիուլին «միայն ցարական պաշտոնական փաստաթղթերով» ծանոթ և 1829—1837 թթ. այդ վարչությունում պաշտոնավարած Ի. Շոպենն անծանոթ էր հենց Ի. Պետրուշևսկու վկայաբերած նույն վարչության կարևոր փաստաթղթերին։

Առաջին փաստաթղթում՝ Կովկասի կառավարչապետ-գեներալ Ի. Պասկևիչին ուղղված վարչության 1828 թ. ապրիլի 26-ի զեկուցագրում, ինչպես և Ս. Եղիազարովի գրքում, իսկապես ասված է, որ Երևանի սարդարը բեկերին

---

44 ՀՍՍՀ պետական կենտրոնական պատմության արխիվ, ֆ. 93, ց. 1, դ. 33, թ. 105, 377, ֆ. 133, ց. 1, մ. 1, գ. 30, թ. 33բ—34, ֆ. 56, էջմիածնի «սինոդի օրագրություններ», թղթ. 1, վավ. 101, թղթ. 9, վավ. 324 և այլն։

45 И. Петрушевский, նշվ. աշխ., էջ 218։

46 Նույն տեղում, էջ 217, 218։

47 Ս. Մարկոսյան, Իմունիտետի իրավունքը Արարատյան երկրում, էջ 148—156։

48 И. Петрушевский, նշվ. աշխ., էջ 220։

ու շիա հոգևորականներին շնորհում էր գյուղեր՝ իբրև թիուլային տիրույթ[49]։ Վարչությունը տեղեկացրել է, որ ժառանգական թիուլները հատկացվում էին «մեծ մասամբ կալվածատերերին՝ նրանց գյուղերի պետական եկամուտների նկատմամբ», կամ, ինչպես Ի. Շոպենը կասեր՝ համատեղում էին մուլքին, իսկ ժամանակավոր թիուլները տրվում էին մեծ մասամբ պետական գյուղերից՝ աշխատավարձի փոխարեն կամ նախկին ծառայությունների համար։ Թիուլատիրն իրավունք էր ստանում «բնակիչներին պահել իրեն», այսինքն՝ ըստ Ի. Շոպենի, վերջիններս հանվում էին պետական հարկացուցակից։ Ի. Պասկևիչը, համառոտելով այդ բոլորը, համաձայնել է վարչության կարծիքին, որ սարդարն առանձնաշնորհում էր «պետական գյուղերի եկամուտներից օգտվելու» իրավունք՝ թիուլ անունով (փաստաթուղթ երկրորդ[50], ընդգծումը մերն է—Ս. Ա.)։ Երրորդ փաստաթուղթը ոչ մի կապ չունի ներկա խնդրի հետ[51]։

Այս ամենում ակնարկ անգամ չկա հողային շնորհումների և թիուլատերերից գյուղացիների անձնական կախման մասին, ինչը պետք է ապացուցեր Ի. Պետրուշևսկին։ «Ամբողջությամբ գյուղական համայնքի շնորհում» ձևակերպումն ինքնին բնավ չի նշանակում հողի (իբրև մասնավոր սեփականության) և գյուղացիների շնորհում։ Ընդհակառակը. Հայկական մարզային վարչության, Ի. Շոպենի, Ս. Եղիազարովի (և նախասովետական այլ հետազոտողների ու ցարական պաշտոնյաների) շատ հայտնի կարծիքով[52] գյուղերի մասնակի թե ամբողջական հատկացումները «բարձր դասի» առանձին ներկայացուցիչներին, լինեին դրանք մուլք, թե թիուլ, ոչ այլ ինչ էին, եթե ոչ՝ պետական եկամուտներից օգտվելու իրավունքի առանձնաշնորհումներ՝ հողի պետական սեփականատիրության հիմունքով։ Այդ կարծիքը, որի կոնկրետ արտահայտություններն են վկայաբերված փաստաթղթերը, բոլոր կողմերով տրամագծորեն հակադիր է մուլքի և XVIII դ. ու XIX դ. սկզբի թիուլի վերաբերյալ Ի. Պետրուշևսկու տեսակետին։

Այսպիսով, մուլքի ու թիուլի նույնասեռության և միատեսակության վերաբերյալ Բ. Հարությունյանի դրույթը հիմնավորվում է Ս. Մարկոսյանի մեկնաբանությամբ՝ մասնատիրոջ իրավունքը դիտելով որպես հարկ-ռենտայի տարբեր բաժինների (տասանորդի և փոքր բահրա-հնգորդի) կամ ամբողջ հարկ-ռենտայի (բահրայի) յուրացման ֆեոդալական իրավունք։ Բ. Հարությունյանը ոչ թե սխալվել է՝ դրականորեն վկայաբերելով Ի. Շոպենի տեղեկությունները թիուլի և սրա «տեղական այլատեսակի» մասին, այլ ինքնահակասել՝ մուլքատիրության հիմքում տեսնելով հողի մասնավոր կալվածատիրական սեփականություն։ Վ. Ռշտունու և Ի. Պետրուշևսկու միջև թիուլի հարցում էական տարաձայնություններ չկան, ինչպես թվացել է Ս. Մարկոսյանին։ Ընդ որում, Ի. Պետրուշևսկուն չի հաջողվել ապացուցել, որ գյուղի

---

49 «Акты, собранные Кавказскою археографическою комиссиею», т. VII, Тифлис, 1878, стр. 491, док. 439; С. Егиазаров, Исследования по истории учреждений в Закавказье, часть I, Казань, 1889, стр. 10.

50 Акты..., т. VII, стр. 492, док. 441.

51 Նույն տեղում, փաստաթուղթ 442։

52 И. Шопен, նշվ. աշխ., էջ 925—926, С. Е. Егиазаров, նշվ. աշխ., էջ 10, 292, նույնի՝ Ֆեոդալական հողատիրությունը Եվրոպայում, մեր երկրի հայաբնակ մասում և մեր գյուղացու այժմյան տնտեսական դրությունը, Թիֆլիս, 1882, էջ 16—23։

ամբողջ հարկ-ռենտայի թիուլային շնորհումը Երևանի խանությունում միաժամանակ պաշտոնապես դարձել էր նաև հողի շնորհում՝ հարկատու բնակիչներով հանդերձ։ Հետևարար, սոսկ նրան վկայակոչող մի շարք հեղինակների տեսակետը, ըստ որի XVIII դ. և XIX դ. սկզբին թիուլը նույնանում էր մուլքին կամ հողի մասնավոր սեփականություն դառնալու «տենդենց» էր ցուցաբերում, առանձնապես Երևանի խանության վերարևմտյան փաստորեն հիմնավորված չէ։

ПО ПОВОДУ ВОПРОСА О ТИУЛЕ

САМВЕЛ АЛЕКСАНЯН

Резюме

Положение Б. Арутюняна об однородности тиула с мульком расценивалось рядом советских исследователей с разных принципиальных позиций. С. Маркосян подчеркивал, что оно противоречит общей точке зрения самого Б. Арутюняна и ряда авторов, согласно которой суть тиула, как правило, заключалась в присвоении пожалованной казенной доли ренты-налога на основе государственной земельной собственности, а право на мульк (взимание 1/10-ой ренты-налога) базировалось на безусловной частной помещичьей земельной собственности.

С. Маркосян же справедливо утверждал, что феодальное право на мульк ограничивалось бессрочным пользованием и распоряжением частью земельной ренты, т. е. мульк действительно был качественно однороден с тиулом на единой основе—на основе феодально-государственной собственности на землю.

Замечания И. Петрушевского, будто причина противоречивости в выводах Б. Арутюняна кроется в частичном повторении «ошибочного» или ограниченного взгляда И. Шопена на тиул, особенно на его «ереванскую» разновидность, не убедительны.

Независимо от некоторого неопределенного применения термина «тиул» («тиульство вообще») в упоминаниях И. Шопена, в целом, достаточно ясно представлены виды тиульных пожалований в Ереванском и Нахичеванском ханствах в начале XIX века. С ними по существу не расходятся документы Армянского областного правления за 1828 г. и замечания С. Егиазарова, освидетельствованием которых И. Петрушевский пытался доказать, будто в XVIII—начале XIX вв. «наряду с рентой» официально были пожалованы в собственность и земли тиульных деревень, с правом владельца на личность зависимых крестьян. Тут имела место поверхностная трактовка И. Петрушевским официальной формулировки «пожалование в тиул цельных сельских общин», которая вовсе не означает пожалование земли с населением в собственность. В вопросе о такого рода эволюции тиула в Восточной Армении между И. Петрушевским и В. Рштуни нет существенных разногласий, как это показалось С. Маркосяну.